

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԻՐԱՐՓԻ ՀՈՎԻԿԻ

**ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Լ. Ս. Հովսեփյան

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Վ. Գ. Համբարձումյան

բանասիրական
գիտությունների թեկնածու, դոցենտ

Մ. Գ. Դալայան

Առաջատար
կազմակերպություն՝

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2016թ. հոկտեմբերի
31 -ին՝ ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում
գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. սեպտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բ.գ.թ., դոցենտ  Ն. Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեմայի արդիականությունը առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ ժամանակակից լեզվաբանությունը մեծապես կարևորում է լեզուների զուգադրական ուսումնասիրությունը, քանի որ այս կամ այն լեզվի կառուցվածքային և գործառական առանձնահատկություններն առավել արդյունավետ կարելի է ուսումնասիրել այլ լեզուների զուգադրական քննությամբ: Նման ուսումնասիրությունները կարևոր են թե՛ տեսական լեզվաբանության և թե՛ լեզուների գործնական ուսուցման առումով: Զուգադրական լեզվաբանությունը, որի նպատակն է երկու (ավելի հազվադեպ՝ երկուսից ավելի) լեզուների զուգադրական քննությունը և այդ քննության հիման վրա եզրահանգումներ կատարելը, հասել է զարգացման այնպիսի բարձր մակարդակի, որ կարող է լուծել մի շարք տեսական և լեզվաուսուցողական խնդիրներ¹: Մյուս կողմից՝ ներկայումս կարևորվում են նաև այս կամ այն լեզվի բառակազմական համակարգին նվիրված ուսումնասիրությունները, քանի որ բառակազմական տարբեր եղանակներով լեզվում անընդհատ նորանոր բառեր են կազմվում, որոնք հարստացնում են լեզվի բառաֆոնդը, հետևաբար նաև տվյալ լեզվով խոսողների բառապաշարը: Հայերենի և անգլերենի զուգադրական քննությունը բառակազմության մակարդակում հնարավորություն է տալիս առավել խորությամբ ուսումնասիրելու երկու լեզուների բառակազմական համակարգերի միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել հայերենի և անգլերենի գոյականական հիմքերով բառակազմական բաղադրությունների կառուցվածքային կաղապարները՝ բացահայտելու համար երկու լեզուների բառակազմության մեջ գործող եղանակների ու միջոցների ընդհանուր գծերն ու տարբերությունները: Մեր առջև դրված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. առանձնացնել գոյականական սերող և բաղադրող հիմքերով բաղադրությունները (համադրական և վերլուծական կազմությունները) հայերենում և անգլերենում,
2. տալ առանձնացված բաղադրությունների կաղապարային նկարագրությունը,
3. բացահայտել գոյականական հիմքերով բաղադրությունների կազմիչ տարրերի իմաստային և շարահյուսական փոխհարաբերությունները զուգադրվող լեզուներում,
4. անդրադառնալ գոյականական հիմքերով բաղադրյալ բառերի և համապատասխան բառակապակցությունների առնչության հարցին,
5. պարզել համադրական և վերլուծական տիպի կազմությունների կաղապարների գործունեությունն ու արդյունավետությունը,
6. ըստ հնարավորին հաստատել տիպաբանական ընդհանրություններ և տարբերություններ երկու լեզուների բառակազմական համակարգերում:

¹ Տե՛ս Ս. Юсупов, Сопоставительная лингвистика как самостоятельная дисциплина, “Методы сопоставительного изучения языков”, М., 1988, էջ 6:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ատենախոսությունը հայերենի և անգլերենի՝ բառաբարդման եղանակով կազմված գոյականական հիմքերով համադրական բարդությունների և հարադրությամբ կազմված գոյական բաղադրիչներով վերլուծական բաղադրությունների առաջին զուգադրական քննությունն է, որով բացահայտվում են քննության ենթակա լեզուների բառակազմության մեջ գործող եղանակների ու միջոցների ընդհանուր գծերն ու տարբերությունները: Հետևաբար ատենախոսության գիտական նորույթն է հայերենի և անգլերենի գոյականական հիմքերով բառակազմական բաղադրությունների կառուցվածքային, իմաստային և շարահյուսական առանձնահատկությունների վերհանումը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Ուսումնասիրությունը կատարված է նկարագրության, վերլուծության, զուգադրության և կադապարման մեթոդների կիրառմամբ: Հայերենի և անգլերենի լեզվական փաստերի ուսումնասիրությունը կատարվել է լեզվի ուսումնասիրության տվյալ փուլում՝ համաժամանակյա մեթոդով. միաժամանակ, ըստ անհրաժեշտության, երբեմն կիրառվել է լեզվական երևույթների ուսումնասիրության տարաժամանակյա մեթոդը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ կատարված հետազոտության արդյունքները կարող են ելակետ ծառայել երկու լեզուների բառակազմության բնագավառում զուգադրական հետազոտումնասիրությունների համար: Դրանում առաջադրված հարցադրումներն ու դրանց լուծումները կարող են հետաքրքրել հայերենի և անգլերենի բառակազմության ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողներին: Ատենախոսությունը տեսական արժեք ունի նաև տիպաբանական ուսումնասիրությունների համար, քանի որ տվյալ ուսումնասիրության մեջ մեր կատարած եզրահանգումները կարող են նպաստել հայերենի և անգլերենի բառակազմության տիպաբանական բնութագրումների ճշգրտմանը: Աշխատանքն ունի նաև գործնական նշանակություն. կարող է կիրառվել հայերենի և անգլերենի բառագիտությանը՝ մասնավորապես բառակազմությանը նվիրված դասընթացներում, ինչպես նաև ուսումնական ուղեցույցներ, դասագրքեր կազմելիս, բառակազմական բառարաններ ստեղծելիս: Մեր օրերում հատկապես կարևորվում է անգլերենի՝ որպես աշխարհում ամենագործածական լեզուներից մեկի գործնական ուսուցումը, որը հայալեզու միջավայրում իսկապես արդյունավետ է դառնում հայերենի և անգլերենի միջև զուգահեռներ անցկացնելիս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության ԵԴՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնում: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են տպագրված հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացություններից: Աշխատանքի վերջում տրված են համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերը: Ատենախոսության ծավալը 149 էջ է:

Ներածության մեջ հիմնավորվում են ատենախոսության թեմայի արդիականությունն ու նշանակությունը, ուրվագծվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, անդրադարձ է արվում ուսումնասիրության աղբյուրներին:

Գլուխ 1. Հայերենի և անգլերենի բառակազմագիտության պատմությունից:

Առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «*Հայերենի բառակազմագիտության պատմության ակնարկ*», համառոտ ներկայացրել ենք հայ լեզվաբանների (Մ. Աբեղյան, Գ. Սևակ, Ա. Մուրվալյան, Ս. Գալստյան, Ս. Էլոյան, Ս. Աբրահամյան և այլք)՝ հայերենի բարդությունների դասակարգումները, դրանց տրված տարբեր անվանումները և այլն: Գոյականական հիմքերով բաղադրությունների քննությունը կատարելիս առաջնորդվել ենք Է. Աղայանի և Լ. Հովսեփյանի առաջադրած սկզբունքներով՝ հաշվի առնելով թե՛ բարդ բառերի դասակարգման, թե՛ բառակազմական եզրույթների ընտրության առանձնահատկությունը: Ի տարբերություն նախորդ հետազոտողների՝ Է. Աղայանը *բարդություն* է համարում միայն համադրական բարդ բառերը, «որոնք ներկայացնում են երկու կամ ավելի հիմնական ձևույթների միավորումը մեկ բառում»²: Լ. Հովսեփյանը հայերենի բառակազմական համակարգում առանձնացնում է երկու՝ *համադրական* և *վերլուծական* տիպեր: Համադրական տիպին են պատկանում *բառաբարդման* ու *ածանցման* եղանակները, որոնց արդյունքում ստացվում են միաձուլ բառեր՝ հիմնական ու երկրորդական ձևույթների տարբեր զուգորդություններով, իսկ վերլուծական տիպին են պատկանում *հարադրումն* ու *կրկնումը*, որոնց օգնությամբ կազմվում են մեկ բառի արժեք ունեցող վերլուծական միավորներ: Համադրական կառույցների մեջ ելակետային միավոր է բառակազմական հիմքը, իսկ վերլուծականներում՝ առանձին բառ-բաղադրիչ³: Այսպիսով, մեր ատենախոսության մեջ *բարդություն* եզրույթը կիրառում ենք միայն *համադրական*, իսկ *բաղադրություն* եզրույթը՝ հիմնականում վերլուծական տիպի կառույցների դեպքում, թեև *բաղադրություն* ընդհանուր եզրույթը կարող է ընդգրկել նաև համադրական բարդությունները: Մեր ուսումնասիրության մեջ անդրադարձել ենք միայն բառաբարդմամբ և հարադրմամբ կազմված բառային միավորներին և ոչ ածանցմանը ու հապավմանը, առանձին դեպքերում՝ նաև այն բաղադրյալ բառերին, որոնց բաղադրմանը մասնակցել են բառաբարդումն ու ածանցումը միաժամանակ (խառը տիպի կաղապարներ):

Առաջին ենթագլխում հայերենի բարդությունների այլ դասակարգումների հետ միասին ներկայացրել ենք նաև հայերենի անվանական վերլուծական կազմություններին՝ Լ. Հովսեփյանի տված դասակարգումը⁴, որի հետևողությամբ վերլուծական կազ-

² Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 268:

³ Տե՛ս Լ. Հովսեփյան, Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ, «Ջահուկյանական ընթերցումներ», (4), Եր., 2009, էջ 106-107:

⁴ Նշված դասակարգումը տրված է Լ. Հովսեփյանի «Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ» հոդվածում: Դասակարգումն ընդգրկում է նաև բայական կառույցները: Դրա՝ միայն անվանական հարադրություններն ընդգրկող մասը տրված է նաև Գ. Վարդանյանի «Ժամանակակից հայերենի անվանական վերլուծական բառակազմությունը» ձեռնարկում (տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 108, Գ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 24):

մույթյուններին նվիրված գլխում քննել ենք հայերենի և անգլերենի գոյականական հիմքերով վերլուծական կազմությունները՝ կրկնավորներն ու հարադրությունները:

Երկրորդ ենթագլխում՝ «Անգլերենի բառակազմագիտության հիմնական խնդիրներն ու հասկացությունները», նախ համառոտ ներկայացրել ենք անգլերենի բառակազմագիտության ձևավորման և զարգացման պատմությունը, այդ բնագավառում ականավոր լեզվաբանների՝ Հ. Մարշանդի, Լ. Բլումֆիլդի, Վ. Ադամսի, Լ. Բաուերի, Ա. Սմիթնիցկու և այլոց ներդրումը, բառակազմության ուսումնասիրության առարկայի հստակեցումը, բառաբարդման ու ածանցման տարբերության, ածանցակերպների հասկացության և այլ հարցերի քննությունը: Ապա ներկայացրել ենք անգլերենում բարդ բառի և բառակապակցության տարբերակման խնդիրը, այդ նպատակով կիրառված տարբեր չափանիշները՝ շեշտի դիրքը (բարդության շեշտը սովորաբար ընկնում է առաջին՝ ձախակողմյան բաղադրիչի վրա, հատկապես երբ բառը կազմված է երկու գոյական բաղադրիչներից, ինչպես՝ *mankind* «մարդկային ցեղ», սակայն այս կանոնից շեղվում են բազմաթիվ բարդություններ), բարդ բառի իմաստային, ձևակառուցվածքային ամբողջականությունը⁵, դրա անընդմիջարկելիությունը⁶, շարահյուսական չափանիշը և այլն: Նշված չափանիշները, սակայն, առանձին վերցրած, լիովին վստահելի չեն բառն ու բառակապակցությունը տարբերակելու համար, ուստի պետք է կիրառվեն միասնաբար: Բարդությունը բառակապակցությունից տարբերակելիս չի կարելի հենվել նաև դրանց գրության ձևի վրա. նույն բարդությունը կարող է տարբեր տեղերում գրվել տարբեր ուղղագրությամբ՝ գծիկով, միասին և անջատ, ինչպես՝ *easy-going* /*easygoing* /*easy going*/ «համակերպվող»: Անդրադարձել ենք նաև բարդության իմաստային կենտրոնի հասկացությանը՝ երկու լեզուներում առանձնացնելով ներկենտրոն (*endocentric*) և արտակենտրոն (*exocentric*) բարդություններ: Ներկենտրոն բարդությունների իմաստային կենտրոնը բառի ներսում է, և բարդության իմաստն անմիջականորեն բխում է դրա կազմի մեջ մտնող բաղադրիչներից, ինչպես՝ *բարձրաշենք* «բարձրակառույց շենք»: Սակայն կան բարդություններ, որոնց մեջ կատարվել են բաղադրիչների իմաստային փոփոխություններ, և այդ բառերի իմաստները ճիշտ արտահայտելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուրի համար տալ լրացուցիչ բացատրություն: Այսպես, *մեծալուն* բառի իմաստն է «հարուստ, մեծ կարողության տեր», ոչ թե տան տեսակ է (*մեծ, փոքր*), կամ, ասենք, անգլերենում *redhead* բառը նշանակում է «կարմրահեր մարդ», ոչ թե մատնանշում է գլխի տեսակ⁷: Դրանք արտակենտրոն բարդություններ են, որոնց մի տեսակը սանսկրիտի քերականության մեջ կոչվում է «բառավրիհի»⁸, օր.՝ *highbrow* «գիտակ ձևացող մարդ». ժամանակակից անգլերենում դրանք կոչվում են *possessive exocentric compounds* «ստացական արտակենտրոն բարդություններ», քանի որ սրանցում առարկան փոխաբերաբար անվանվում է՝ իր ամենացայտուն (արտաքին կամ ներքին) հատկանիշից ելնելով:

⁵ Տե՛ս Ա. Смирницкий, Лексикология английского языка, М., 1998, էջ 33:

⁶ Տե՛ս Լ. Bloomfield, Language, Chicago and London, 1984, էջ 232:

⁷ Տե՛ս Գ. Miller, English Lexicogenesis, Oxford, 2014, էջ 54:

⁸ Տե՛ս Ի. Арнольд, Лексикология современного английского языка, М., 1986, էջ 125:

Անդրադարձել ենք նաև բարդ բառի և դարձվածքի տարբերակման խնդրին, իսկ ենթագլխի վերջում տվել ենք անգլերենի բարդությունների դասակարգումը հայերենի զուգադրությամբ՝ ըստ դրանց կառուցվածքի, բաղադրիչների կապակցման ձևի, դրանց միջև եղած իմաստային ու շարահյուսական հարաբերությունների և այլնի:

Գլուխ 2. Գոյականական հիմքերով համադրական բարդությունները հայերենում և անգլերենում: Սույն գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «*Գոյականական բաղադրող հիմքով համադրական բարդությունները հայերենում և անգլերենում*», քննել ենք այն բարդությունները, որոնցում գոյականը բաղադրող հիմքն է և բարդության շարահյուսորեն գերադաս անդամը: Առանձնացրել ենք համադրական բարդությունների բառակազմական կաղապարները:

1.Գ+Գ (N+N) կաղապարով բարդությունները բառակազմական տեսակետից բավականին արդյունավետ են հայերենում և անգլերենում⁹: Հայերենում դրանք լինում են հոդակապավոր՝ *ագռավածագ*, և անհոդակապ՝ *կալսկերգ*: Առանձնանում են համազոր՝ *արդուզարդ*, և ստորադասական՝ որոշիչ-որոշյալի՝ *բազմալիցաբար*, հատկացուցիչ-հատկացյալի՝ *անծրևաջուր*, հարաբերությամբ բարդություններ: Հայերենում Գ+Գ կաղապարով հիմնականում կազմվում են *գոյականներ՝ դաշտանկար, ածականներ՝ մարմնագույն, նաև մակբայներ՝ գյուղեգյուղ*: Դրանց մեջ կան արտակենտրոն բարդություններ՝ *բոցահեր*: Անգլերենում N+N կաղապարով մեծ մասամբ կազմվում են գոյականներ՝ *applesauce* «խնձորախյուս», բայեր՝ առաջացած գոյականների կոնվերսիայի եղանակով՝ *handcuff* «ծեռնաշղթա հագցնել», և փոքրաթիվ *ածականներ՝ homestyle* «պարզ, անպաճույճ»: Կան N+N կաղապարով որոշիչ-որոշյալի (*cheesecake* «շոռակարկանդակ»), հատկացուցիչ-հատկացյալի (*fishtail* «ծկան պոչ») և խնդրային (*dressmaker* «դերձակ») հարաբերությամբ բարդություններ: Այս կաղապարով կազմվում են նաև արտակենտրոն բարդություններ, օր.՝ *egghead* «գիտուն»: Երկու լեզուների միջև կան նաև ընդհանրություններ Գ+Գ կաղապարով բարդությունների արտահայտած իմաստների առումով. օրինակ՝ դրանք կարող են արտահայտել տեղային, տարածական իմաստներ (*գեյրահովիտ, forestland* «անտառապատ տարածք») և այլն: **2. Ա+Գ (A+N)** կաղապարով հայերենում կազմվում են գոյականներ՝ *խառնազանգված*, և ածականներ՝ *ահեղաղեն*: Կան հոդակապավոր՝ *մանրավեպ*, և անհոդակապ՝ *երկարագի*, բարդություններ: Ա+Գ կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև կա *որոշիչ-որոշյալի* հարաբերություն, ինչպես՝ *պնդամկան*: Անգլերենում A+N կաղապարով հիմնականում կազմվում են *գոյականներ՝ busywork* «անօգուտ աշխատանք», և *ածականներ՝ freehand* «ծեռակերտ», հազվադեպ նաև *բայեր՝ բարդ գոյականների կոնվերսիայի* եղանակով, օր.՝ *tightrope* «լարախաղացություն անել»: Երկու լեզուներում կան նաև խառը տիպի կաղապարներ, որոնք հնարավոր չէ միանշանակ հատկացնել բարդ կամ ածանցավոր բառերի կաղապարների թվին, քանի որ նման կազմություններում բառակազմական քայլերի հաջորդականություն չի դիտվում¹⁰ (*կապտաչա, kindhearted* «բարեսիրտ»): Ա+Գ (A+N) կաղապարով բարդությունները քննվող լեզուներում ունեն

⁹ Տե՛ս P. Štekauer, R. Lieber, Handbook of Word-Formation, Springer, 2005, էջ 378:

¹⁰ Տե՛ս Լ. Հոսեյնյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 288:

նաև իմաստային ընդհանրություններ, օր.¹ կարող են ցույց տալ հոգեմտավոր, բարոյական հատկանիշներ (*բարեհոգի*, *hothead* «տաքզվուխ»): **3. Թ+Գ (Num.+N)** կաղապարի իրացմանը հայերենում մասնակցում են հիմնականում քանակական թվականները՝ կազմելով հոդակապավոր՝ *յոթնաբլուր*, և անհոդակապ՝ *հնգանդամ*, բարդություններ, որոնց բաղադրիչների միջև կա որոշիչ-որոշյալի հարաբերություն: Թ+Գ կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ՝ *փասնահարկ*, նաև՝ գոյականներ՝ *երկինջյուն*: Անգլերենում Num.+N կաղապարով կազմվում են հիմնականում գոյականներ՝ *twopence* «երկպենսանոց դրամ», և ածականներ՝ *twopenny* «երկու պենսի արժեք ունեցող»: Երկու լեզուներում կան նաև դասական թվականներից ածանցված բարդություններ, ինչպես՝ *առաջնահերթ*, *firsthand* «առաջին ձեռքից» և այլն: Կան նաև Թ+Գ խառը տիպի կաղապարներ, ինչպես՝ *չորսձեռնանի*: Անգլերենում դրանք հիմնականում վերլուծական են, օր.¹ *two-sided* «երկկողմանի»: **4. Դ+Գ (Pron.+N)** կաղապարով բարդություններն առանձնացրել ենք ըստ բաղադրիչ դերանունների տեսակների՝ անձնական՝ *եսակենսորոն*, ցուցական՝ *նույնաբնույթ*, փոխադարձ՝ *իրարամարտ*, որոշյալ՝ *ամենասիրտ*, անորոշ՝ *այլաբարբառ*, հարցահարաբերական՝ *ինչչափ*, ժխտական՝ *ոչնչադեմի*: Դ+Գ կաղապարով կազմվում են գոյականներ՝ *ինքնաբացարկ*, ածականներ՝ *նույնաթույր*, մակբայներ՝ *այդժամ*, և դերանուններ՝ *այսչափ*: Կան հոդակապավոր՝ *նույնադեր*, և անհոդակապ՝ *սույնօրինակ*, բարդություններ: Անգլերենում ևս Pron.+N կաղապարով բարդություններն առանձնացրել ենք ըստ բաղադրիչ դերանունների տեսակների՝ անձնական՝ *himself/herself* «նա ինքը», ստացական՝ *myself* «ես ինքս», ցուցական՝ *thisaway* «այս ուղղությամբ», որոշյալ՝ *everybody* «ամեն ոք», անորոշ՝ *someplace* «ինչ-որ մի տեղ», ժխտական՝ *nobody* «ոչ ոք»: Pron.+N կաղապարով կազմվում են գոյականներ՝ *otherworld* «հանդերձյալ աշխարհ», ածականներ՝ *everyday* «ամենօրյա», մակբայներ՝ *otherwhile* «այլ անգամ», դերանուններ՝ *anything* «որևէ բան»: **5. Բ+Գ (V+N)**. հայերենում բայահիմք կամ բայարմատ+գոյական կաղապարով կազմվում են հիմնականում գոյականներ՝ *աշխատասեղան*, երբեմն նաև ածականներ՝ *հանդուրժամիտ*: Կան *հոդակապավոր*՝ *լսագործիք*, և *անհոդակապ*՝ *ցայտաղբյուր*, բարդություններ: Բ+Գ կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև հիմնականում առկա է որոշիչ-որոշյալի կամ հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն: Այդ բարդությունները շարահյուսական կապակցության վերածելիս առաջին անդամը դառնում է անորոշ դերբայ կամ բայանուն գոյական՝ սեռական հոլովով դրված¹¹ (*գրանցամատյան* = *գրանցելու* (*գրանցման*) մատյան), նաև հարակատար (*զինաբախում*=*զինված բախում*) ու ենթակայական դերբայներ (*թափառախումբ*=*թափառող խումբ*): Անգլերենում կան V+N կաղապարով արտակենտրոն բարդություններ, որոնցից շատերը վերաբերում են մարդկանց, օր.¹ *cutpurse* «գրպանահատ». սրանց բաղադրիչների միջև կա ուղիղ-խնդրային հարաբերություն, օր.¹ *killjoy* «ուրիշների ուրախությունը թունավորող մարդ»: Մի շարք բարդությունների բաղադրիչների միջև կա հատկացուցիչ-հատկաց-

¹¹ Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էդյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, էջ 327-328:

յալի կամ որոշիչ-որոշյալի հարաբերություն՝ *blowtorch* (*blowing torch*) «զողալամա՝ զողման, զողելու լամա»: V+N կաղապարով կազմվում են գերազանցապես գոյականներ՝ *checklist* «ստուգացուցակ, ստուգման ցուցակ», երբեմն նաև *ածականներ*՝ *pinchpenny* «ժլատ», ու բայեր՝ *shunpike* «ճամփեզրով քայլել»: **6. Դրբ.+Գ (Particip.+N)** կաղապարի իրացմանը հայերենում մասնակցում են անորոշ և ենթակայական դերբայները: Անորոշ Դրբ.+Գ կաղապարով կազմվում են գոյականներ՝ *աշխատելաճոճ*, իսկ ենթակայական Դրբ.+Գ կաղապարով՝ *ածականներ*՝ *ներողամիտ*, և գոյականներ՝ *արարողակարգ*: Անորոշ Դրբ.+Գ կաղապարով բարդությունների սերող հիմքերն արտահայտում են սեռական հոլովի իմաստ, հետևաբար բարդության բաղադրիչների միջև առկա է հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն՝ *գործելակերպ-գործելու կերպ*, իսկ ենթակայական Դրբ.+Գ կաղապարով կառույցների բաղադրիչների միջև կան որոշիչ-որոշյալի՝ *զիջողամիտ*, և հատկացուցիչ-հատկացյալի՝ *արարողապետ*, հարաբերություններ: Անգլերենում այս կաղապարի իրացմանը մասնակցում են Particip. I և Particip. II դերբայները. Particip. I+N՝ *hummingbird* «կոլիբրի՝ ամերիկյան փոքրիկ թռչուն», Particip. II+N՝ *drawnwork* «ծեռագործ»: **7. Մ+Գ (Adv.+N).** հայերենում բարդության հիմքերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս երբեմն դժվարություն է ծագում ածականական հիմքը մակբայականից տարբերակելիս, քանի որ ածականն ու մակբայը հայերենում հաճախ ձևաբանորեն տարբերակված չեն: Մ+Գ կաղապարով բարդություններն առանձնացրել ենք ըստ բաղադրիչ մակբայների տեսակների՝ ժամանակի՝ *կանխավաճառք*, տեղի՝ *առաջագլուխ*, չափ ու քանակի՝ *առավելակշիռ*, ձևի՝ *դանդաղերթ*: Կան անհոդակապ՝ *արագառում*, և հոդակապավոր՝ *հավերժագահ*, բարդություններ: Այս կաղապարով կազմվում են գոյականներ՝ *կանխավարձ*, և ածականներ՝ *դեռածիլ*: Կան կառույցներ, որոնք միաժամանակ և՛ ածական են, և՛ մակբայ, օր.՝ *հապճեպաբայ*: Բաղադրիչների միջև կա որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն: Անգլերենում Adv.+N կաղապար առանձնացնելը նույնպես դժվար է, քանի որ հաճախ նույն բառն անգլերենում միաժամանակ կարող է լինել մակբայ, նախդիր և ածական: Բուն մակբայի և գոյականի կապակցությամբ կան փոքրաթիվ համադրական բարդություններ, օր.՝ *everglade* «ճահճուտ»: **8. Կ+Գ (Prep.+N).** այս կառույցները հայերենում հազվադեպ են, օր.՝ *դիմապար*, *տականոթ* և այլն: Սրանք բաղադրիչների միջև կա որոշիչ-որոշյալի հարաբերություն: Անգլերենում առանձնացրել ենք Prep.+N կաղապարով բարդությունների հետևյալ խմբերը. ա) տեղի, ուղղության նախդ.+Գ՝ *aboveground* «գետնից վեր», բ) ժամանակի նախդ.+Գ՝ *beforehand* «նախօրոք», գ) այլ իմաստներ արտահայտող նախդ.+Գ՝ *byname* «մականուն»: Prep.+N կաղապարով կազմվում են *գոյականներ*՝ *aftereffect* «հետազդեցություն», *ածականներ*՝ *indoor* «սենյակային», *մակբայներ*՝ *outdoors* «դրսում»: Կան արտակենտրոն բարդություններ, օր.՝ *backwater* «հեռավոր, խուլ»:

Երկրորդ ենթազխում՝ «*Գոյականական սերող հիմքով համադրական բարդությունները հայերենում և անգլերենում*», քննել ենք այն համադրական բարդությունները, որոնցում գոյականը սերող հիմքն է: **1.Գ+Ա (N+A)** կաղապարով բարդություններում հիմնական իմաստն արտահայտում է ածականը: Կան հոդակապավոր՝ *աղապակաս*, և անհոդակապ՝ *գունառապ*, բարդություններ: Գ+Ա կաղապարով հիմնա-

կանում կազմվում են ածականներ՝ *ծախապակաս* և այլն, որոնց մի մասը կարող է նաև մակբայական կիրառություն ունենալ, օր.՝ «*ուրաքաց աղջիկ*», «աղջիկը *ուրաքաց* էր քայլում»: Բաղադրիչների միջև կան որոշիչ-որոշյալի, օր.՝ *մարդաշատ*, և խնդրային հարաբերություններ, օր.՝ *մարտունակ*: Կան արտակենտրոն բարդություններ, օր.՝ *աչքաքաց, ծայնագուրկ*, որոնք բնութագրում են մարդուն, սակայն բնութագրվող առարկան բարդության մեջ ձևական արտահայտություն չունի: Գ+Ա կաղապարով բարդություններն առանձնացվում են նաև ըստ արտահայտած իմաստների: Անգլերենում ևս N+A կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ՝ *bloodthirsty* «արյունոտ»: Սրանք ոչ շարահյուսական բարդություններ (asyntactic compounds) են, որոնցում բաղադրիչների շարադասությունը խախտված է, օր.՝ *homesick* «հայրենակարոտ» բարդության փոխարեն պիտի լիներ *sickhome*: Կան արտակենտրոն բարդություններ, օր.՝ *headstrong* «պնդաճակատ, համառ»: **2. Գ+Բ (N+V)**. գոյական+բայարմատ/ բայա-հիմք կաղապարն ամենագործուն է հայերենում, որով կազմվում են հիմնականում ածականներ՝ *ազգահալած*, սակայն կան նաև սակավաթիվ գոյականներ, ինչպես՝ *մազաբաժան*: Գոյականները քիչ են, քանի որ դրանց մի մասը կա՝ միաժամանակ նաև ածական է, կա՝ մ էլ գոյականացել է ածականներից: Կան անհոդակապ՝ *ակնդիր*, և հոդակապով՝ *հյուրասեր*, բարդություններ: Բայական բաղադրիչը կարող է հանդես գալ մաքուր բայարմատով և տարբեր քերականական ձևավորումներով, օրինակ՝ արտահայտված լինել գրաբարի պատճառական բայափոխքերով՝ *երախտահարույց*: Գ+Բ կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև կան խնդրային (օր.՝ հանգման անուղղակի խնդրի՝ *երկնահաս*), պարագայական (օր.՝ տեղի պարագայի՝ *կղզեբնակ*), ենթակայական (օր.՝ լուսաբաց) հարաբերություններ: Գ+Բ կաղապարով բարդություններն ըստ իմաստի կարող են խմբավորվել հետևյալ կերպ, օր.՝ ա) վիճակ, դրություն, հատկանիշ, զգացմունքներ, ապրումներ՝ *աղմկասեր, ամոթալից, արյունաթաթախ, արնախում*, բ) կրոն, նախապաշարմունք՝ *աղոթալոյաց, աստվածակերպ*: Անգլերենում N+V կաղապարը արդյունավետ է միայն բարդ բայերի կազմության դեպքում՝ հիմնականում հետադարձ բառակազմության եղանակով (backformation)՝ *babysitter* «երեխային խնամող, դայակ»- (*to*) *babysit* «երեխային խնամել, դայակություն անել»: Թեև հետադարձ բառակազմությամբ ստացված բարդությունները չեն կազմվում անմիջապես N+V կաղապարի հետևողությամբ, սակայն, միևնույն է, վերջնական արդյունքով դրանք հանգում են N+V կաղապարին, ինչպես՝ *babysitter=babysit=baby+sit* «երեխային խնամել, դայակություն անել»: Կան նաև կոնվերսիայի եղանակով կազմված N+V կաղապարով բարդ բայեր, ինչպես՝ *to carbon-copy* «պատճենել»: Բացի բարդ բայերից՝ N+V կաղապարով կարող են կազմվել նաև բարդ գոյականներ, սակայն արդեն բառաբարդման և ոչ թե հետադարձ բառակազմության եղանակով, օր.՝ *nosebleed* «արյունահոսություն քթից», կամ համապատասխան բայերի կոնվերսիայով, օր.՝ *to househunt* «տուն փնտրել» > *househunt* «տան փնտրտուք»: N+V կաղապարով *բարդ ածականներ* չեն կազմվում: N+V կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև կարող են լինել ուղիղխնդրային՝ *sightsee* «տեսարժան վայրեր դիտել», ենթակայական (agentive)՝ *sunrise* «արևածագ», հարաբերություններ և այլն: **3. Գ+Դրբ. (N+Particip.)** կառույցով բարդությունների կազմությանը

հայերենում մասնակցում են անորոշ և ենթակայական դերբայները: Առանձնացվում են բարդություններ գոյական+անորոշ դերբայ կաղապարով՝ *բողոքարկել*, և գոյական+ենթակայական դերբայ կաղապարով՝ *նաղիոսիրող*: Անգլերենում կան N+Particip. I (*eyecatching* «աչքի զարնող») և N+Particip. II (*browbeaten* «սահաբեկված») կառույցներ: N+Particip. I կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև կա, օրինակ, ուղիղխնդրային հարաբերություն՝ *heartbreaking* «սրտաճմլիկ», իսկ N+Particip. II կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև առկա են խնդրային (օր.՝ ներգործող խնդրի՝ *manmade* «մարդու կողմից շինված») և պարագայական (օր.՝ տեղի պարագայի՝ *homemade* «տանը պատրաստված») հարաբերություններ: **4. Գ+Կ (N+Prep.)**. հայերենում Գ+Կ կաղապարով բարդությունները սակավաթիվ են: Կան հոդակապավոր՝ *արևադեմ*, և անհոդակապ՝ *արեգընդդեմ*, բարդություններ: Գ+Կ կաղապարով կազմվում են գոյականների՝ *գիշերադեմ*, և ածականների՝ *մարդամուր*: Գ+Կ կաղապարով բարդությունները մեծ մասամբ պարագայական նշանակություն են արտահայտում՝ տեղի պարագայի՝ *գլխադակ*, ժամանակի պարագայի՝ *օրումեջ*: Անգլերենում նախդիրները՝ որպես բաղադրող հիմք, գոյականների հետ հազվադեպ են հանդես գալիս: N+Prep. կաղապարով բարդության՝ մեզ հանդիպած եզակի օրինակներից է *sundown* «արևամուտ» բարդությունը: Կան նաև բայակազմ գոյականով և նախդրով կառույցներ, օր.՝ *a blastoff* «արձակում, պոկում»¹²:

Գոյականական բաղադրող և սերող հիմքերով բարդությունների սերող հիմքերում կարող են լինել տարբեր հնչյունափոխություններ, օր.՝ ա) **ա>օ** *կոճկանցք*, բ) **ի>ը** *ազնվազարմ*: Համադրական բարդությունների սերող և բաղադրող հիմքերը դրվում են տարբեր հոլովներով, օր.՝ սերող հիմքը՝ սեռական-տրական հոլովաձևով՝ *գարնանամուր*, բաղադրող հիմքը՝ սեռական-տրական հոլովաձևով՝ *հինավուրց*:

Գլուխ 3. Գոյական բաղադրիչներով վերլուծական բաղադրությունները հայերենում և անգլերենում: Սույն գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «*Կրկնավորներ*», զուգադրաբար քննել ենք հայերենի և անգլերենի գոյական բաղադրիչներով վերլուծական կրկնավորները, որոնք ըստ բաղադրիչների կապակցման միջոցի՝ բաժանվում են՝ 1. *հարակցական* (*այլակ-այլակ*, *ship-shape* «*տեղը տեղին*»), 2. *շաղկապական* (*հանգ ու հունգ*, *half and half* «*կես-կես*, հավասարապես»), 3. *նախդրական* (*երես առ երես*, *hand-in-hand* «*ձեռք ձեռքի*») տեսակների: Կան անհնչյունափոխ (*դար ու դար*, *goody-goody* «առաքինի ձևացող մարդ») և հնչյունափոխված բաղադրիչներով Գ+Գ կրկնավորներ: Սովորաբար փոփոխության է ենթարկվում երկրորդ բաղադրիչը, երբեմն՝ նաև առաջինը, օր.՝ տեղի է ունենում երկրորդ բաղադրիչի ձայնավորի կամ ձայնավորների հնչյունափոխություն, հայերենում՝ **ա>ու** (*ծակ-ծուկ*), **ա>ե** (*ժանգ ու ժենգ*), **ե>ու** (*դեղ ու դուղ*) հնչյունափոխությամբ, ինչպես նաև երկու ձայնավորների փոփոխությամբ՝ *աղքատ-ուղքուտ*, անգլերենում՝ [i]-[æ] (*chit-chat* «շատախոսություն») և [i]-[o] (*ping-pong* «սեղանի թենիս») հնչյունափոխությամբ. սրանք կոչվում են *ablaut combinations* (ձայնդարձային կապակցություններ): Հայերենում կան նաև հոլովված բաղադրիչներով կրկնավորներ, օր.՝ առաջին

¹² St' u V. Adams, Complex Words in English, Harlow, 2001, էջ 76:

բաղադրիչը *բացառական հոլովով*¹³ ծովից ծով: Անգլերենի կրկնավորներում հոլովական իմաստներն արտահայտվում են նախդիրների միջոցով, օր.¹⁴ *arm-in-arm* «թև թև»:

Երկրորդ ենթագլխում՝ «*Հարադրություններ*», ներկայացվում են հայերենի և անգլերենի հարադրական վերլուծական կազմությունները: **Հարակցական հարադրությունների** բաղադրիչներն ուղղակի հարակցությամբ են հարադրվում, գրվում են միացման գծիկով և ունեն իմաստային, հնչական միասնություն: Գ+Գ կաղապարով հարակցական հարադրությունները բաժանվում են խմբերի՝ ըստ բաղադրիչների իմաստային մերձավորության աստիճանի. ա) իմաստով առնչակից բաղադրիչներով՝ *հարս-փեսա*, *parent-teacher* «ծնող-ուսուցիչ». անգլերենում նման հարադրությունները մեծ մասամբ նաև ածականական (որոշչային) արժեք ունեն, բ) *հոմանիշ բաղադրիչներով*¹⁵՝ *հույս-ապավեն*, *love-affection* «սեր-համակրանք»), գ) *հականիշ բաղադրիչներով*՝ *առավույր-իրիկուն*, *friend-enemy* «ընկեր-թշնամի»: Հիմնականում քերականական փոփոխությունների է ենթարկվում հարակցական հարադրությունների երկրորդ բաղադրիչը, օր.¹⁶ *տափիկ-պապիկներ*, *friend-enemies* «ընկեր-թշնամիներ»: *Father-daughter* տիպի հարադրությունների բաղադրիչների հարաբերությունը համադասական է, օր.¹⁷ *[[father-daughter] dance]* նշանակում է «հոր և աղջկա պար»: Հարակցական բաղադրություններ են նաև երկանդամ հատուկ անունները, օր.¹⁸ *Գորիս-Երևան*, *Austria-Hungary* «Ավստրո-Հունգարիա», և ամսանուններով կազմված հարադրությունները, օր.¹⁹ *մարտ-ապրիլ*, *June-July* «հունիս-հուլիս»: **Առդրական հարադրությունները** բնութագրում են միևնույն առարկան, երևույթը տարբեր կողմերից: Գ+Գ կաղապարով առդրական հարադրությունները միավորվում են տարբեր իմաստային խմբերում, օր.²⁰ ա) զբաղմունք, մասնագիտություն՝ *ճարտարապետ-մտավորական*, *editor-director* «խմբագիր-տնօրեն», բ) կուսակցություններ և դրանք ներկայացնող գործիչներ՝ *լուսավորիչ-դեմոկրատ*, *democrat-republican* «դեմոկրատ-հանրապետական»: Քերականական փոփոխությունների ենթարկվում է սրանց աջակողմյան բաղադրիչը, օր.²¹ *poet-translators* «բանաստեղծ-թարգմանիչներ»¹³, այդ իսկ պատճառով այն համարվում է բաղադրության իմաստային կենտրոնը: Դրանց բաղադրիչների միջև կարելի է դիտել և՛ ստորադասական հարաբերություն, երբ երկրորդ բաղադրիչը մասնավորեցնում է առաջինի իմաստը, օր.²² *թիշկ-վարակազետ*, և՛ համադասական հարաբերություն, երբ բաղադրիչների միջև կարող ենք դնել «և» համադասական շաղկապը¹⁴, օր.²³ *թիշկ և վարակազետ*, անգլերենում՝ *poet and translator* «բանաստեղծ և թարգմանիչ»: Որոշիչ-որոշյալի հարաբերություն կա, օրինակ՝ փոխառյալ բաղադրիչով կազմություններում, ինչպես՝ *բետա-պրոիում*, *beta-particle* «բետա-մասնիկ», հայերենում նաև *վայ* ծայնարկություն+գոյական կառույցներում՝ *վայ-բարեփոխիչ*, փոխաբերական իմաստով որոշ բաղադրություններում, օր.²⁴ *լույս-աստվածուհի* «սիրելի, պաշտելի էակ», *մահ-աղջիկ* «մահը աղջկա տեսքով»: Անգլերենում որոշիչ-որոշյալի հարաբերություն կա ազգակցական կապեր արտահայտող հարադրություն-

¹³ St' u I. Plag, Word-Formation in English, Cambridge, 2003, էջ 147:

¹⁴ St' u Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 227:

ների բաղադրիչների միջև, օր.՝ *dancer-sister* «պարուհի-քույր», ու նաև այն հարադրությունների բաղադրիչների միջև, որոնց առաջին բաղադրիչը մատնանշում է երկրորդի սեռը, օր.՝ *he-bear* «ործ արջ», *girl-child* «աղջիկ երեխա»: Նման բաղադրություններն անհրաժեշտ են անգլերենին, քանի որ ոչ բոլոր բառերն են ստանում սեռ մատնանշող *-ess* վերջածանցը: Անգլերենում առդրական բաղադրությունը, հարադրվելով երրորդ գոյականի հետ, դառնում է դրա որոշիչը, ինչպես՝ *[[author-historian] group]* «գրող-պատմաբանների խումբ»: **Հատվածական հարադրություններից** մեզ հետաքրքրում են միայն նրանք, որոնք իրենց կազմում ունեն գոյական բաղադրիչ՝ որպես հարադրության երկրորդ անդամ, և ժամանակի ընթացքում չեն վերածվել համադրական բարդությունների, օր.՝ *նացիոնալ-շովինիստ*, *սոցիալ-պացիֆիստ*: Դրանք հիմնականում քաղաքական-հասարակական հասկացություններ արտահայտող եզրույթներ են, որոնք հայերենին են անցել եվրոպական լեզուներից ռուսերենի միջոցով, հազվադեպ փոխառվել են ռուսերենից անմիջականորեն¹⁵: Կան հարադրություններ, որոնցում երկրորդ բաղադրիչները հայերեն բառեր են, օր.՝ *սոցիալ-դավաճան*: Անգլերենում դրանք հատվածական հարադրություններ չեն, քանի որ, ի տարբերություն հայերենի, սրանց առաջին բաղադրիչները՝ *social*, *national* բառերն ածանցավոր են և ունեն ածականի արժեք, իսկ հայերենում, քանի որ չկա ածականակերտ համարժեք ածանց, դրանք ոչ թե գիտակցվում են որպես ածականներ, այլ որպես հատված հիմքեր՝ մեր լեզվում եղած ածականակերտ *-ական*, *-իստ* ածանցների կորստով¹⁶. անգլերենում, փաստորեն, հայերեն հատված բառի դիմաց ունենք լիարժեք բառ՝ ածական, որ, միանալով գոյականին, տալիս է հետևյալ կազմությունները՝ *national-anarchism* «նացիոնալ-անարխիզմ», *social-chauvinist* «սոցիալ-շովինիստ» և այլն: Թերևս այդպիսի հատված հիմքերով բաղադրություններ կարելի է համարել անգլերենում դասական լեզուներից փոխառյալ բաղադրիչ(ներ)ով բարդությունների մի մասը (օր.՝ *sociolinguistics* «հանրալեզվաբանություն»), սակայն դրանք մեծ մասամբ ոչ թե վերլուծական, այլ համադրական կազմություններ են: *Socio* բաղադրիչով հանդիպում են նաև վերլուծական կառույցներ, օր.՝ *socio-analysis* «սոցիալ-վերլուծություն»: **Շաղկապական հարադրությունների** մեծ մասը կազմվում է «ու» համադասական շաղկապով, ավելի քիչ՝ «և» շաղկապով: Հիմնականում Գ+ու+Գ կաղապարով բաղադրությունների երկրորդ բաղադրիչն¹⁷ է ենթարկվում քերականական փոփոխությունների, օր.՝ *զենք ու զորք*, *զենք ու զորքի*, *զենք ու զորքով* և այլն (բացի **հայր**, **մայր** բառերով կազմված բաղադրություններից, որոնցում առաջին բաղադրիչը ևս հղովվում է): Անգլերենում շաղկապական հարադրությունները հիմնականում *and* (երբեմն նաև *or*) համադասական շաղկապով են կազմված, օր.՝ *milk-and-water* «անզոր, թույլ». սրանք այսպես կոչված **բառակապակցական բարդությունների (phrasal compounds)** մի տեսակն են: Առանձ-

¹⁵ Հ. Օհանյան, ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982, էջ 65-67:

¹⁶ Տե՛ս Գ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 87-88:

¹⁷ Տե՛ս Ա. Մարգարյան, ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Եր., 1990, էջ 79-80:

նացրել ենք շաղկապական հարադրությունների հետևյալ տեսակները. ա) իմաստով առնչակից՝ *թողոթ ու թանաք, arts and crafts* «արվեստներ ու արհեստներ», բ) հոմանիշ՝ *գանգալ ու բողոք, house and home* «տուն ու տեղ, ունեցվածք», գ) *հականիշ* բաղադրիչներով՝ *կյանք ու մահ, alpha and omega* «սկիզբն ու վերջը»: Երբեմն գոյականը հարադրված է այլ խոսքի մասի, օր.՝ Գ+Բ՝ *ահ ու զարկ, tax and spend* «հարկերի բարձրացման քաղաքականություն»: Հայերենում կան բաղադրիչ(ների) քերականական ձևավորմամբ հարադրություններ, օր.՝ *կենաց ու մահու* (գրաբարյան սեռական հոլովածևով), *ազգ ու ազինք, եզներ ու կովեր* (հոգնակի թվով): Գ+Գ շաղկապական հարադրությունները հայերենում հիմնականում կազմում են համակաղապարային կառույցներ (բացառությամբ հոլովական ձևերի): Անգլերենում, սակայն, երկու գոյականների հարադրումից կարող է կազմվել ոչ միայն *գոյական*, այլև ածական՝ *hole and corner* «գաղտնի, ծածուկ», մակբայ՝ *body and soul* «լիովին (հոգով ու մարմնով)», բայ՝ *top and tail* «բանջարեղենի վերևի ու ներքևի հատվածները հեռացնել»: Բառակապակցական բարդությունների մյուս տեսակը շարահյուսական բարդություններն են՝ ազատ բառակապակցություններին և նախադասություններին բնորոշ կառուցվածքով՝ *jack-of-all-trades* «բազմաշնորհ», *love-in-idleness* «զառմանուշակ», *mother-of-pearl* «սադափ»: Հաճախ ամբողջական նախադասություններ են վերածվում բառակապակցական բաղադրությունների, օր.՝ *a what-do-you-think-movement* «շարժում, որով մեկին ուզում են հարցնել, թե նա ինչ է մտածում»¹⁸. Նման կառույցների առկայությունն անգլերենում պայմանավորված է դրա վերլուծական լեզու լինելու հանգամանքով, որ թույլ է տալիս մի քանի բառ և նախդիր կողք կողքի դնելով՝ առանց որևէ քերականական փոփոխության ենթարկելու ստանալ մեկ բառի արժեք ունեցող միավորներ: Սրանք հայերենում չունեն իրենց զուգահեռը: **Կապակցական հարադրությունները** նախկին շարահյուսական կապակցությունների կայունացման ու քարացման հետևանքով առաջացած, առավելագույնս բառայնացման ենթարկված բառակազմական միավորներ են (ոչ թե դարձվածքներ կամ բաղադրական կապակցություններ): Երկու գոյականներով կազմված կապակցական կառույցների առաջին բաղադրիչը սովորաբար բացառական հոլովով է դրված, օր.՝ *ոչից գլուխ*: Կան գոյականով և սպասարկու խոսքի մասերով կազմված կառույցներ. գրաբարյան նախդիրների և գոյականի հարադրմամբ կազմված կապակցական հարադրություններում գոյական բաղադրիչը կա՛մ ուղիղ ձևով է դրված, կա՛մ այլ հոլովածևով, օր.՝ ա) *ան* նախդրով՝ *ան Աստված*, բ) *ըստ* նախդրով՝ *ըստ կարգի*, գ) *ի* նախդրով՝ *ի պաշտպանություն* և այլն: Հայերենի նմանատիպ կառույցներին զուգահեռել ենք անգլերենում գոյական պարունակող նախդրավոր քարացած կառույցները, օր.՝ *in a word* «մի խոսքով», *in the pink* «ուժերի ծաղկման շրջանում» և այլն: Կապակցական կազմություններ են նաև *առաջ* բառի և գոյականների կապակցությամբ կառույցները, օր.՝ *ամիս առաջ*: Կապակցական հարադրությունների մեջ կան վերաբերականներ, որոնց կազմում առկա է գոյական բաղադրիչ, օր.՝ *ամենայն հավանականությամբ*:

¹⁸ Տե՛ս՝ L. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 207:

Երրորդ ենթագլխում՝ «Երկու գոյականներով և գոյականով ու այլ խոսքի մասերով բաղադրված հարադրություններն անգլերենում», քննել ենք նշված կազմությամբ վերլուծական բաղադրությունների կաղապարները միայն անգլերենում, քանի որ, ի տարբերություն հայերենի, որում վերլուծական բաղադրությունների մեծ մասում (ոչ բոլորում) եթե մի բաղադրիչը գոյական է, ապա հիմնականում մյուսն էլ է գոյական, անգլերենում գոյականը բացի գոյականից հարադրվում է նաև այլ խոսքի մասերի պատկանող տարբեր բառերի: Քննել ենք գոյական վերջնաբաղադրիչներով վերլուծական բաղադրությունները (**N+N'** *life support* «կենսապահովում» (**G+N'** *walking stick* «ձեռնափայտ»), **A+N'** *true-life* «իրապաշտական», **Num.+N'** *one-way* «միակողմանի», **Pron.+N'** *self-analysis* «ինքնավերլուծություն», **V+N'** *pinch-belly* «ժլատ մարդ (հատկապես ուտելիքի վրա փող չծախսող)», **Particip. I+N'** *sliding door* «սահող դուռ», **Particip. II+N'** *added value* «ավելացված արժեք», **Adv.+N'** *then-president* «նախկին նախագահ», **Prep.+N'** *after-tax* «հարկումից հետո, մաքուր (եկամուտ)») և գոյական սկզբնաբաղադրիչով բաղադրությունները (**N+G'** *decision-making* «որոշում կայացնելը», **N+A'** *sky-blue* «երկնակապույտ», **N+V'** *stage-manage* «բեմադրել», **N+Particip. I'** *life-changing* «կյանքը փոխող, կարևոր», **N+Particip. II'** *custom-built* «պատվերով պատրաստված», **N+Prep.** *hands-on* «ակտիվ, գործողություններով լի»)։ սրանց բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություններին, դրանց իմաստային առանձնահատկություններին անդրադարձել ենք հպանցիկ, քանի որ նույն հարաբերությունները կան նաև համադրական կառույցների դեպքում: Քննվում են նաև համատեքստային կամ այսպես կոչված իրավիճակային բաղադրությունները, օր.՝ *garden wine* «պարտեզում երեկոյթների և այլ միջոցառումների ժամանակ մատուցվող գինի»¹⁹: Անդրադարձ է արվում անգլերենի յուրահատուկ կառուցվածքին, նշվում է, որ դրա անջատականության և վերլուծականության շնորհիվ վերլուծական բաղադրություններն ավելի հեշտ են կազմվում այս կամ այն կապակցության հիման վրա: Վերջում բերվում են հայերենում և անգլերենում գոյականական հիմքերով բաղադրությունները ներկայացնող աղյուսակներ:

Եզրակացություններ

Հայերենի և անգլերենի գոյականական հիմքերով համադրական և վերլուծական կազմությունների զուգադրական քննությունը մեզ թույլ է տալիս անել եզրահանգումներ, որոնք կարող են նպաստել բառակազմագիտության մեջ տիպաբանական բնութագրումների ճշգրտմանը: Թեև հայերենը և անգլերենը պատկանում են լեզվական տարբեր տիպերի, սակայն երկու լեզուների բառակազմական համակարգերի միջև կան բազմաթիվ ընդհանրություններ. միևնույն ժամանակ, իհարկե, կան նաև տարբերություններ:

1. Հայերենի և անգլերենի բառակազմության պատմության համառոտ քննությունը ցույց է տալիս, որ երկու լեզուների բառակազմագիտության մեջ թեև կա խնդիրների նույնություն, սակայն կան նաև լեզուների կառուցվածքից բխող տարբե-

¹⁹ Տե՛ս P. Štekauer, *Meaning Predictability in Word-Formation*, Amsterdam/Philadelphia, 2005, էջ 238-239:

րություններ: Անգլերենի բառակազմագիտության հիմնախնդիրներից է բարդ բառի և բառակապակցության տարբերակման հարցը. այս կամ այն միավորը բառակազմակա՞ն է, թե՞ շարահյուսական: Հայերենում դրանց տարբերակման հնարավորություններն անհամեմատ ավելի մեծ են: Թեև անգլերենի բառակազմագիտության մեջ առաջարկվել են բարդ բառի և բառակապակցության տարբերակման այլևայլ չափանիշներ, սակայն նշված խնդիրը դեռևս վերջնական լուծում չի ստացել:

2. Ձուգադրվող լեզուներում բառակազմական արդյունավետ և գործուն եղանակներից են բառաբարդումն ու հարադրումը: Անգլերենում հարադրման եղանակով նոր բառեր ավելի հեշտ են կազմվում՝ պայմանավորված լեզվի անջատական, վերլուծական բնույթով:

3. Համադրական տիպի կառույցներում առանձնացվում են գոյականական բաղադրող և սերող հիմքով բարդություններ: Գոյականական *բաղադրող* հիմքով բարդությունների կաղապարներն են երկու լեզուներում՝ **Գ+Գ (N+N)**, **Ա+Գ (A+N)**, **Թ+Գ (Num.+N)**, **Դ+Գ (Pron.+N)**, **Բ+Գ (V+N)**, **Դերբ. +Գ (Partcip.+N)**, **Մ+Գ (Adv.+N)**, **Կ+Գ (Prep.+N)**: Գոյականական *սերող* հիմքով բարդությունների կաղապարներն ավելի քիչ են. դրանք են **Գ+Գ (N+N)**, **Գ+Ա (N+A)**, **Գ+Բ (N+V)**, **Գ+Դերբ. (N+Particip.)**, **Գ+Կ (N+Prep.)** կաղապարները: Թվարկված կաղապարներով հայերենում և անգլերենում հիմնականում կազմվում են գոյականներ ու ածականներ, սակայն կան կաղապարներ, որոնք արդյունավետ են նաև մակբայների, դերանունների և անգլերենում՝ նաև բայերի կազմության մեջ: Նշված կաղապարների բառակազմական արդյունավետությունը համադրական բարդություններ կազմելիս երբեմն նույնն է երկու լեզուներում, երբեմն՝ տարբեր: Կան կաղապարներ, որոնցով և՛ անգլերենում, և՛ հայերենում կազմվում են բավականին մեծ թվով համադրական բարդություններ և, ընդհակառակն, կան նաև ցածր արդյունավետություն ունեցող կաղապարներ:

4. Հայերենի և անգլերենի համադրական բարդությունների բաղադրիչների միջև դրսևորվում են շարահյուսական տարբեր հարաբերություններ՝ որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի և այլն: Խնդրային ու պարագայական հարաբերությունների դրսևորման առումով ավելի հարուստ են հայերենի բարդությունները՝ հատկապես **Գ+Բ** կաղապարով կառույցները:

5. Հայերենում, պայմանավորված կցականության բարձր աստիճանով, համադրական բարդությունների կաղապարներն ավելի հարուստ են. դրանց կազմում կան ամենատարբեր ածանցներ, բաղադրիչները ենթարկված են զանազան քերականական ձևավորումների՝ ի տարբերություն անգլերենի, որտեղ բարդության բաղադրիչները հիմնականում մաքուր հիմքերով են հանդես գալիս, թեև, իհարկե, կան նաև ածանցավոր հիմքերով համադրական բարդություններ և ածանցավոր բաղադրիչներով վերլուծական բաղադրություններ:

6. Հայերենում բարդությունների բաղադրիչներում կան հնչյունափոխական ամենատարբեր երևույթներ, իսկ անգլերենում հնչյունափոխված են հիմնականում կրկնավոր *ծայնդարծային կապակցությունները* և *հանգավորված կրկնավորները*:

7. Հայերենում համադրական բարդությունների սերող և բաղադրող հիմքերը կարող են արտահայտված լինել ոչ միայն ուղղական, այլև սեռական-տրական

հոլովածներով: Անգլերենում կան սերող հիմքերով փոքրաթիվ նմանատիպ բարդություններ, որոնք հնուց ավանդված, քարացած ձևեր են՝ կազմված հին անգլերենի սեռական հոլովածնով: Հայերենի բարդություններում սերող հիմքերի քարացած ձևեր ևս կան:

8. Գոյական բաղադրիչներով վերլուծական բաղադրությունները հայերենում, ի տարբերություն անգլերենի, ավելի հաճախ բաղադրիչների համազոր հարաբերություն ունեն: Անգլերենում կան ոչ միայն բաղադրիչների համադասական, այլև ստորադասական հարաբերությամբ վերլուծական բաղադրություններ: Երկու լեզուներում համադասական հարաբերություն ունեն **կրկնավոր, շաղկապական, հարակցական և առդրական** հարադրությունների բաղադրիչները, թեև հարակցականների և առդրականների մի մասի բաղադրիչների միջև եղած հարաբերությունը կարող է ընկալվել թե՛ որպես համադասական, թե՛ որպես ստորադասական: **Հատվածական հարադրությունների** առաջին բաղադրիչը հայերենում հատված, իսկ անգլերենում լիարժեք ածական է: Անգլերենում միայն փոխառյալ բաղադրիչով (ներով) որոշ բաղադրություններ կարող են համարվել հատվածական հարադրություններ: **Կապակցական հարադրությունները** երկու լեզուներում քարացած, բառայնացած նախկին շարահյուսական կառույցներ են: **Շաղկապական և բառակապակցական հարադրությունները** անգլերենում միասին մեկ խումբ են կազմում: Սրանց մեջ կան մեկ բառի արժեք ունեցող կառույցներ, հաճախ նաև նմանատիպ նախադասություն-կապակցություններ. վերջիններն իրենց զուգահեռը չունեն հայերենում, իսկ անգլերենի բառակապակցական հարադրությունների մյուս մասը՝ շաղկապական հարադրությունները, լիովին զուգադրվում են հայերենի շաղկապական հարադրություններին, սակայն, ի տարբերություն հայերենի, որում դրանք կազմվում են միայն *ու*, և շաղկապներով, անգլերենում կարող են կազմվել նաև *or* շաղկապով:

9. Եթե հայերենում վերլուծական բաղադրությունները (բառակազմական, ոչ թե շարահյուսական միավորները) կազմվում են հիմնականում երկու գոյականների և ավելի հազվադեպ՝ մեկ գոյականի և այլ բաղադրիչի հարադրությամբ, ապա անգլերենում վերլուծական տիպի բաղադրություններ կազմվում են ոչ միայն երկու գոյականների, այլև գոյականի և մնացած գրեթե բոլոր խոսքի մասերի հարադրությամբ, որոնցում գոյականը կա՛մ առաջին բաղադրիչն է, կա՛մ երկրորդը (գոյականի հետ որպես երկրորդ բաղադրիչներ հարադրություններ չեն կազմում միայն Pron., Num. և Adv. խոսքի մասերը): Նույն կաղապարը կարող է ավելի արդյունավետ լինել համադրական բարդություններ կազմելիս և քիչ արդյունավետություն ունենալ վերլուծական բաղադրությունների կազմության մեջ, օրինակ, ավելի բազմազան են Num.+N, A+N վերլուծական բաղադրությունները՝ համեմատած համադրականների հետ: Փոխաբերը, օրինակ, մարդկանց բնութագրող V+N *համադրական* արտակենտրոն կառույցները անգլերենում ավելի շատ են, քան նույն կաղապարով *վերլուծական* բաղադրությունները, իսկ նրանք, որոնք մարդկանց չեն բնութագրում, ընդհակառակն, ավելի հաճախ վերլուծական բաղադրություններ են: Համադրական տիպի Particip. I+N և Particip. II+N կառույցներն անգլերենում սակավաթիվ են, փոխաբերը նույն կաղապարով կան բազմաթիվ վերլուծական բաղադրություններ: N+Prep. կաղապարն

անգլերենում վերլուծական բաղադրություններ կազմելիս շատ արդյունավետ չէ և հիմնականում կազմվում է բայական գոյականներով:

10. Այսպիսով, եթե համադրական կառույցները հայերենում ավելի գործուն են, ապա անգլերենի մասին նույնը պնդել չենք կարող, քանի որ կառույցների հաճախականությունը կախված է կոնկրետ կաղապարներից՝ մերթ համադրական, մերթ վերլուծական: Հայերենում գոյական բաղադրիչով բառաբարդման ամենաարդյունավետ կաղապարներն են՝ **Գ+Գ, Գ+Ա, Գ+Բ, Ա+Գ**, իսկ անգլերենում՝ **N+N, N+A, V+N, A+N, Particip. I+N, Partcip. II+N, N+Particip. I, N+Particip. II** կաղապարները: Սրանցից **Partcip. I+N, Partcip. II+N** և **N+Particip. I, N+Particip. II** կաղապարներն արդյունավետ են վերլուծական բաղադրությունների կազմության մեջ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հոդվածներում՝

1. Որոշիչ-որոշյալ կապակցությամբ բարդությունները հայերենում և անգլերենում, ԲԵՀ, Բանասիրություն, Երևան, 2014թ., N 1 (142), էջ 61-67:
2. Հայերենի և անգլերենի անվանական վերլուծական կրկնավոր բաղադրությունների զուգադրական քննություն, ԲԵՀ, Բանասիրություն, Երևան, 2015թ., N 1 (16), էջ 61-72:
3. Անգլերենում և հայերենում բարդ բառի ու բառակապակցության տարբերական հարցի շուրջ, ԲԵՀ, Բանասիրություն, Երևան, 2015թ., N 2 (17), էջ 58-65:
4. Գոյականական բաղադրիչներով շաղկապական հարադրությունները հայերենում և անգլերենում, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V գիտաժողովի զեկուցումներ», Երևան, 2015թ., էջ 5-17:
5. Անգլերենի և հայերենի բառակազմության ընդհանուր դրույթներ (Գոյականական հիմքերով բաղադրություններ), ԵՊՀ, «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2015թ., N 6, էջ 18-23:
6. Գոյական հիմնաբառով դարձվածային կապակցությունները հայերենում և անգլերենում, ԵՊՀ, «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդես, Եր., 2015թ., N 1 (18), էջ 30-40:
7. Դարձվածային կապակցությունների դասակարգումն անգլերենում հայերենի զուգադրությամբ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Հայագիտական հանդես, Երևան, 2015թ., N 2 (30), էջ 25-33:
8. Ածական+գոյական կաղապարով համադրական բարդությունները հայերենում և անգլերենում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Հայագիտական հանդես, Եր., 2016թ., N 2 (32), էջ 46-57:

КАРАПЕТЯН СИРАПИ ОВИКОВНА
КОНСТРУКЦИИ С ИМЕННЫМИ ОСНОВАМИ В СЛОВООБРАЗОВАТЕЛЬНОЙ
СИСТЕМЕ АРМЯНСКОГО И АНГЛИЙСКОГО ЯЗЫКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – “Общее и сравнительное языкознание”

Защита состоится 31-ого октября 2016 г. в 15:00, на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике при Институте языка им. Гр. Ачаряна НАН РА
(адрес: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15)

РЕЗЮМЕ

Цель диссертации – сопоставительное исследование структурных моделей словообразовательных конструкций с именными (существительными) основами в современном армянском и английском языках для выявления общих черт и различий в способах и средствах словообразования в исследуемых языках, что может способствовать уточнению их типологической характеристики на словообразовательном уровне.

Актуальность диссертации обусловлена важностью типологических изысканий в современном языкознании, т. к. структурные и функциональные особенности языков наиболее продуктивно выявляются именно при их сопоставительном исследовании. Сопоставительно-типологическое рассмотрение словообразования армянского и английского языков дает возможность наиболее полно выявить общие черты и различия сопоставляемых языков на этом уровне. С другой стороны, в настоящее время придается важное значение исследованию словообразовательных процессов, т. к. в языках постоянно образуются новые слова, пополняющие лексический фонд языков и словарный запас их носителей.

Научная новизна и практическое значение диссертации заключаются в том, что данная работа, как первая попытка сопоставительного исследования словообразовательных структур с именными основами в современном армянском и английском языках, может послужить отправным пунктом для дальнейших типологических исследований в области словообразования. Результаты исследования могут использоваться в вузовских курсах при непосредственном обучении лексике и словообразованию армянского и английского языков, способствовать созданию учебников, пособий и справочников, а также составлению словообразовательных словарей.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

Во введении обосновываются актуальность темы, значение работы в области типологических исследований языков, намечаются цели и задачи исследования, дается краткое описание источников.

В первой главе – “*Из истории армянской и английской словообразовательной науки*”, состоящей из двух разделов, дается исторический очерк изучения словообразования в обоих языках, представляются принципы, на основании которых

выполнено настоящее исследование словообразовательных конструкций с именными основами, приводится классификация словообразовательных типов, способов и средств в современном армянском языке в сопоставлении с английским. Представляются основные концепции и задачи, связанные с научным исследованием словообразовательных закономерностей современного английского языка, в частности, особое внимание уделяется принципам и критериям разграничения сложных слов и словосочетаний, экзоцентрических и эндоцентрических конструкций, а также классификации словообразовательных моделей английского языка в сопоставлении с армянским.

Во второй главе – *“Синтетические словосложения с именными основами в армянском и английском языках”*, состоящей из двух разделов, во-первых, рассматриваются модели со второй (правой) производящей именной основой в армянском и английском языках и синтаксические отношения между их компонентами. Соответствующие словосложения двух языков сопоставляются также с точки зрения их семантики. Далее на основе тех же принципов дается анализ синтетических словосложений с первой (левой) производящей именной основой в исследуемых языках. При рассмотрении указанных словосложений принимается во внимание не только сочетаемость разных частей речи с именными основами в той или иной модели, но также результат словосложения, т. е. какие части речи образуются по данной модели. Представляются также фонетические изменения, происходящие в производящих основах армянского языка при словосложении.

В третьей главе – *“Аналитические словообразовательные конструкции с именными основами в армянском и английском языках”*, состоящей из трех разделов, рассматриваются два основных способа аналитического словообразования – редупликация и соположение, т. е. аналитические конструкции с дистантным расположением компонентов (аддитивным соположением, примыканием, усечением первой основы, союзным соединением, словосочетанием), а также модели соединения двух существительных и существительного с другой частью речи в английском языке. Редупликаты в рассматриваемых языках классифицируются по способу соединения их компонентов (собственно-редупликация, союзное соединение, предложное соединение), по фонетическим изменениям компонентов и по их формально-семантическим особенностям. Словообразовательные модели с дистантным расположением компонентов также описываются по их структурным, семантическим и грамматическим признакам с выявлением общих черт и различий в исследуемых языках. Отмечается, что в силу аналитичности и аморфности английского языка в нем легко образуются аналитические словообразовательные конструкции на основе того или иного словосочетания. В конце третьей главы приводятся обобщающие таблицы, отражающие словообразовательные особенности конструкций с именными компонентами в современном армянском и английском языках.

В заключении диссертации в десяти пунктах обобщаются и излагаются основные результаты исследования.

NOUN-BASED STRUCTURAL PATTERNS IN THE ARMENIAN AND ENGLISH
WORD-FORMATION SYSTEMS

Dissertation for a Candidate's Degree of Philological Sciences,
Specialty 10.02.02 – “General and Comparative Linguistics”

The defence of the dissertation will be held on 31 October, 2016, at 15:00, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (address: 0015, st. G. Lusavorich, 15).

SUMMARY

The aim of the dissertation is the comparative analysis of the noun-based structural patterns in Armenian and English word-formation systems, aiming at revealing similarities and differences existing between the two languages concerning the ways and means of word-building, which may contribute to the clarification of their typological characterisation at the level of word-formation.

The topicality of the dissertation is conditioned by the importance of typological researches in modern linguistics since it is through comparative analysis that the structural and functional peculiarities of languages can be revealed most efficiently. The comparative-typological investigation of word-formation of the Armenian and English languages gives an opportunity to disclose more completely the similar and different features existing between the compared languages at this level. On the other hand, nowadays the investigations devoted to the processes of word-formation are of great importance as far as new words are continually being coined in languages to enrich the lexical fund of the languages, and consequently, the word-stock of their speakers.

The scientific novelty and the practical value of the dissertation lie in the fact that the given investigation, being the first attempt of a comparative analysis of word-formation structures composed of noun bases in Modern Armenian and English, can serve as a starting point for further typological investigations in the field of word-building. The outcomes of the dissertation can be used in university courses, namely, in teaching lexicology and word-formation of the Armenian and English languages. The results of the research can also be of great help in compiling coursebooks, handbooks and reference books as well as in creating word-building dictionaries.

The dissertation consists of an introduction, three chapters, conclusion and bibliography.

Introduction presents the topicality and the significance of the work in the sphere of typological investigations of languages, outlines the goals and the tasks of the investigation and gives a brief description of the sources of the investigation.

Chapter One entitled “*From the History of Armenian and English Word-Formation Studies*” consists of two subchapters presenting the historical outline of the studies in the sphere of word-formation in both languages. It also refers to those principles according to which the given investigation of the noun-based patterns is carried out, as well as gives a classification of word-formation types, ways and means in Modern Armenian with reference to the English language. This chapter also includes the description of the main concepts and goals connected with the scientific investigations of word-formation regularities of Modern English; in particular, special importance is attached to the principles and criteria of differentiating between compound words and word-combinations, exocentric and endocentric constructions, as well as to the classification of the English word-formation patterns in comparison with those of the Armenian language.

Chapter Two entitled “*Synthetic Noun-Based Compounds in the Armenian and English Languages*” consists of two subchapters. Firstly, it examines the patterns of synthetic compounds with the noun as the second (right) component in the English and Armenian languages and the syntactic relationships existing between their components. The corresponding compounds of both languages are compared also on the basis of their semantic peculiarities. Secondly, on the basis of the same principles it presents the analysis of synthetic compounds with the noun as the first (left) component in the languages under investigation. In examining the compounds under study, great importance is attached not only to the co-occurrence of different parts of speech with noun bases in this or that pattern, but also to the result of compounding, i.e. which parts of speech are created by the given pattern. The chapter also discusses the phonetic changes occurring in the generating bases of the compounds in the Armenian language.

Chapter Three entitled “*Analytical Word-Formation Structures with Noun Components in the Armenian and English Languages*” comprises three subchapters, which examine the two main means of analytical word-formation – reduplication and juxtaposition, i. e. the analytical structures with distant location of components (adjunction/addition, apposition, by means of truncation of the first component, syndetic connection and combination), as well as those patterns in the English language which are composed of two nouns or a noun and another part of speech. The reduplicates of the languages under investigation are classified according to the way their components are linked to each other (reduplication proper, syndetic connection, prepositional connection), as well as to the phonetic changes of the components and their formal-semantic peculiarities. The word-formation patterns with distant location of components are also studied according to their structural, semantic and grammatical specific features with the aim of pointing out common and differential features in the languages under investigation. It is mentioned that owing to the analytical and amorphous nature of the English language, analytical word-formation structures are created easier on the basis of this or that word combination. This chapter ends up with summarizing tables reflecting the word-formation peculiarities of noun-based structures in Modern Armenian and English.

Conclusion sums up the main outcomes (ten points) of the study.

